

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ\*  
Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Սպիտակ համայնքի կողմից «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱԾ-ԱՊՁԲ-24/36» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգի 2,3,7 չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 05032652
- բանկային հաշվեհամարն է՝ Ամերիաբանկ, 1570094113470100
- գործունեության հասցեն է՝ Արմավիրի մարզ, ք.Վաղարշապատ, Մաշտոցի 672, 19 բն.
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ b2gllc.am@gmail.com
- հեռախոսահամարն է՝ 077035055
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ БИ ТУ ДЖИ ООО

Սույնով «ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՀՀ ԼՄՍՀ-ԷԱԾ-ԱՊՁԲ-24/36»\* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակցի ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

• թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

• բացակայում է հրավերով սահմանված՝ «ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիստուն տոկոս «ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

• ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)\*\* և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը
Ալիսա Աղաջանյան Արթուրի	ն/ք 010391944	

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

«ԲԻ ԹՈՒՒ ԶԻ» ՍՊԸ տնօրեն՝ Ալիսա Աղաջանյան